

Ա. Ծատուրեանի, Յովհաննէս Յովհաննիսեանի և Կ. Կրասիլ-  
նիկեանի:

«Լուսնայ» ի այս յՆ-ում տպագրուած է մեր նոր աշխա-  
տակից պ. Յարութիւն Թումանեանցի «Թարգմանած Պուշկինի  
նի «Զրահեղձ» և «Էլէգիա» բանաստեղծութիւնները:

Թիֆլիզի Հայ, ռուս և վրաց մամուլի նախաձեռնու-  
թեամբ (բացի «РАВНЭЗЪ» և «Իվերիա» «Թերթերի») Վրաց  
Քաղվէթի եկեղեցում հոգեհանգիստ կատարուեց Պուշկինի  
յիշատակին և որոշուեց կազմել մի ֆոնդ Թիֆլիսի պարբե-  
րական մամուլի գրաշարներին օգնելու:

Պետերբուրգում լոյս տեսաւ Պուշկինին նուիրուած  
մի ստուար ժողովածու ռուսերեն լեզուով, որտեղ զետե-  
ղուած են ի միջի այլոց և Իւրիյ Վեսելովսկու «Պուշկինը  
Հայոց գրականութեան մէջ» յօդուածը:

## ՆՈՒՒԺԱՉԵՒ Մ՛ՆԵՐ

(Մի վարիանտ ազգային սլօէմայից)

### Ա

Քաջ, դիւցազնական Սասուն աշխարհում  
Մըհեր անունով մի մարդ էր ապրում.  
Ինքը իշխան էր, հայ էր ծագումով,  
Բեղերը սրած, պարթև հասակով:  
Արքայավայել գահի վրայ բազմած,  
Կայծակի թուրը իր ձեռքին բռնած՝  
Դուռման սրտերին ահ էր տարածում,  
Իր սահմաններից հեռու հալածում...  
Քարու պաշտպան էր, չարի հոգեհան,  
Մի խօսքով չը կար նըրա պէս իշխան.  
Աշխարհն այնպէս էր նա կառավարում՝  
Ինչպէս արծիւը օդի մէջ իշխում:  
Ոչոք չէր կարող նըրա դէմ կանգնել,  
Կամ ոյժը փորձել, կամ պատերազմել.  
Նըրա հարուածին չէին դիմանում,

Խեղճ գաղաններն էլ ուռի պէս դողում...  
 Կայծակի նման Սասունից իջնում  
 Թշնամիներին մոխիր էր գարձնում.  
 Ձը գիտէր վախը, ոյժ ունէր անհուն,  
 Երբ լսում էին Մըհերի անուն՝  
 Սարսափում էին երկրի պետերը,  
 Սուլթ այրերի մէջ ապրող գւերը  
 Հոգւով վեհանձն էր, մարմնով յաղթանդամ,  
 Գուռում յաղթող էր միշտ ամեն անգամ,  
 Գովքն էին երգում մարդ թէ անասուն,  
 Ազատ էր ապրում աշխարհը Սասուն...  
 Բ

Դեռ չէր լրացել տասնումէկ տարին՝  
 Մի տիրութիւն էր պատել Մըհերին.  
 Սո՛վ էր Սասունում. հացը թանկացել,  
 Բնակիչներին մահ սպառնացել.  
 Ինչպէս մանգաղը արտերն է հնձում՝  
 Սովը հարիւրով մարդկանց կոտորում  
 Դրսումը չըկայ երթևեկութիւն.  
 Փակել են ճամփէք փոթորիկ և ձիւն,  
 Լի կատաղութեամբ սուլում է քամին,  
 Սառնամանիք է լեռների գըլիսին.  
 — Ե՛նչո՛ւ է, հայրիկ, նեղում ժողովուրդ, —  
 Մըհերը գնաց հարցնելու խորհուրդ, —  
 Ինչո՛ւ Սասունից գնալ գալ չունեն,  
 Մարդիկ դրսիցը չեն բերում ցորեն.  
 Ինչո՛ւ է տիրում սուվը՞մեր երկրում,  
 Ի՞նչ են Սասունցիք փակուել տըներում.  
 Ի՞նչ է պատճառը՝ կտրուել է հաց,  
 ձանապարհները ե՛րբ կըլինին բաց.  
 Շուտ ասա՛, հայրիկ, ասա՛ ինձ մի լուր,  
 Վ՛իշտը ճընշում է իմ սիրտը տխուր...»  
 — Որդի՛, ահա ելի մի մեծ առիւծ կայ  
 Սասունը տանող լեռնուղու վըրայ.  
 Մարդ մօտենալիս նա յարձակում է,

Ձիրանների մէջ բռնում՝ լափում է,  
 Այն օրից, երբ նա լոյս ընկաւ ճամփին,  
 Հացը թանկացաւ, ճար չեղաւ սովին:  
 Սասուն անցուղարձ հնար չէ լինում.  
 Փարդիկ մեռնում են մահուան ճանկերում...  
 Տեսնենք Աստուածը մի դուռը բանայ.  
 Մեզնից վիշապը գուցէ հեռանայ.  
 Ի՞նչ պատուհաս է, տանջանք բանալի մէջ,  
 Մեր այս վիճակին արդեօք կըլինի՞ վերջ...  
 — Ես կատաղեցի, հայր, քնչ ես ասում,  
 Ի՞նչպէս առիւծը մարդկանց վնասում.  
 Միթէ Սասունում դա է ձգել սով,  
 Վաղը կուռելու ես կ'երթամ շուտով:  
 — Չափրդ ճանաչիր, գործ ունես ո՛ւմ հետ.  
 Չէ աղբում նրան ոչ թուր, ոչ մի նետ.  
 Նա քեզ կըբռնի, սաղ սաղ կուլ կըտայ,  
 Կորստիդ համար ո՞վ կըմղկտայ...  
 — Ես չեմ վախենում, հայր, պէտք է գնամ,  
 Ահեղ կուռի մէջ անձըս մոռանամ.  
 Կամ պէտք է մեռնեմ, կամ պէտք է լաղթեմ,  
 Սասունը տանջող սովից ազատեմ...  
 — Լաւ ես մտածում, կըթողնեմ յօժար,  
 Մէկը չըլինի հազարի համար.  
 Ես համաձայն եմ այդ գաղափարին,  
 Հոգևով կըսիրեմ անձնուէր մարդին.  
 Լաւ է ձգտելը վեհ ազատութիւն,  
 Բայց պահանջում է զոհաբերութիւն.  
 Այս խիստ ձմեռը սոսկալի ցրտից  
 Չէ համարձակում դուրս գալ մարդ տնից.  
 Ո՞նց կ'երթաս, ցուրտը կը բերէ լալդ,  
 Անյաղթ է առիւծն, զուր է գնալդ...»

Գ

Մըհերը հօրը <sup>1)</sup> ականջ չը դրեց

1) Սասունցի պահապանների (փահլէվանների) սոհմա

Առաւօտը վաղ անեղը <sup>2)</sup> լարեց,  
 Դուրս եկաւ տանից մի նեղ կիսամնով,  
 Դիմեց առիւծին հաստատ քայլերով:  
 Չմե՛ռ էր դուրսը... քամին դառնաշունչ  
 Փէտացընում էր մարդու երես, դունչ:  
 Ճամփէք փակուած են ձիւնի շերտերով,  
 Ծառեր կախուած են սառցի բիւրեղով:  
 Ո՛չ սառնամանիք, ո՛չ բուք էր հարցնում,  
 Մըհերը վտահ առաջ էր գընում.  
 Ձիւնը ճըռ՛ճում էր նրա ոտքի տակ,  
 Ո՛չ ձեռնոց ունէր, ո՛չ հագին մուշտակ:  
 Վերջապէս հասաւ քաղցած վիշապին  
 Ինչպէս մօտենայ մահու տապալապին,  
 Տեսաւ աչքերը արիւնով լցուած.  
 Մըռնչում էր նա սաստիկ կատաղած.  
 Փրփրում, ոռնում էր, բարձրաձայն գողում.  
 Նըրա ահիցը ամբողջ անտառում  
 Մի ձայն չէր լսոււմ, ո՛չ մի շնչաւոր,  
 Ծըւար են մտել գա՛զան, թխաւոր...  
 Ամենքն են փախել ցրտի երեսից,

գրական պատմական ճիւղաւորութիւնը ժողովրդական նիւթերում (արձակ գրուածներում, բանաստեղծական տաղաչափականը շատ բիչ ունենք) շատ տեղ աղաւաղուած է երևում, բազմատեսակ և միմեանց շատ հակասական. օրինակ Վասմայ ծուրքում Ա. վարիանտով Մհերը Ասլի-Մէլիբէ որդին է յիշուում, իսկ Բ. վարիանտով՝ Սանասարի Մի տեղ Ասլի-Մէլիբէն է հօրը (Սենեբերիմին) սպանող հանդիսանում, մի ուրիշ տեղ Սանասարը. սակայն ժրն է ուղիղ սրանցից: Մեր հետամտութիւնը (նաև ուրիշ շատ ժողովրդական գրուածքներ մեր հետամտութեան օգտին են խօսում) ցոյց է աւելիս, որ Մհերը եղել է իսկապէս Սանասարի որդին և հօր սպանողն էլ Սանասարն է (տե՛ս ներկայ ընթացակարգը Ասլի-Մէլիբէ և Սանասար պօէման):

<sup>2)</sup> Ժողովուրդը պատմում է, որ Մհերը ճանապարհ է ընկել առիւծի հետ մենամարտելու աննղով, սակայն հռուի մէջ աննղի գործադրութիւնը չենք տեսնում...

Առիծ-վիշապի ամեհի ձայնից,  
 Միայն քամին էր ահով ու դողով  
 Լցնում ձորերը ձիւնի տարափով...  
 Երկիրն այլանդակ, անդարդ ձիւնապատ.  
 Սրգում էր երկինք և մառախլապատ.  
 Լալիել էր սնու փնու քնած բնութիւն,  
 Գերեզմանական տիրել լուութիւն...



Ահա հեռուիցը նկատեց վիշապ  
 Մի ջահէլ տրդալ գալիս է շտապ.  
 Այնպէս որոտաց, տեղից վեր թռաւ,  
 Որ կարծես բարձրից երկինք փուլ եկաւ.  
 Փնու-փնու ծիծաղեց դիւցազն Մհեր,  
 Իսկոյն մօտեցաւ սրտով անվեհեր.  
 Մի սարսափելի լուիւ սկսուեց.  
 Ահուելի ձայնը շուրջը խլացրեց.  
 Դրմբդրմբացին ձորեր ու լեռներ,  
 Սասանեց անտառ, փախան գազաններ,  
 Մհեր ու վիշապ իրար բռնեցին.  
 Միմեանց յաղթելու շատ քաշքշեցին.  
 Յանկարծ Մհերը՝ մի ձեռքի ափով՝  
 Վիշապի գլխից՝ կատաղի թափով՝  
 Բռնեց ու այնպէս պինդ զարկեց գետին,  
 Որ ճղուեց գետին, խրուեցաւ միջին.  
 Վիշապի մարմին հսկայական սար...  
 Դուրս ճոթուեց միջից երկու հաւասար.  
 Յաղթուիթեան լուրը տարածուեց Սասուն,  
 Դադարեց մարդկանց սովից վայնասուն.  
 Ուրախութեան ձայն Սասնոյ բուրգերից՝  
 Օգը թնդացրեց ամեն կողմերից.  
 Սասունցիները առաջ վազեցին,  
 Մըհերին «փառքով» դիմաւորեցին.  
 Այսպէս դիւցազն ազատ, ապահով  
 Մտաւ Սասունը մնծ յաղթանակով...

Ե

Խնդաց Սասունը, նոր կեանք զգեցաւ,  
 Սովի ճանկերից որ ազատուեցաւ.  
 Մարգիկ դուրս եկան իրանց տներից,  
 Թռչուն գազաններ թագնած բներից.  
 Սասունում նորից եղաւ անց ու դարձ,  
 Դրսի գիւղերից եռաց ցորնի բարձ,  
 Հացն էժանացաւ. և ճանապարհներ  
 Զը տեսան դաժան սառնամանիքներ ..

ՋՅ

Մըհերի արած քաջագործութիւն  
 Տուաւ ժողովուրդ գնահատութիւն.  
 Գովաբանական երգ շարահիւսեց  
 Ու Առիւծաձև անուամբ հռչակեց...

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԵԱՆՅ

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Կեսարացի Կարապետ եպիսկոպոս Էլէգեօզեան 1848-ին Մատթէոս կաթողիկոսի պատրիարքութեան ժամանակ և նորա հրամանով գտլով Անի, Ղօշալ վանք և շրջակայ այլ նշանաւոր վայրերը՝ անձամբ ուսումնասիրել է ամեն տեղերը և նոցա ընդարձակ ու մանրամասն տեղագիրը կազմել՝ առնելով մէջը բոլոր արձանագրութիւնները իրենց հարազատ ընթերցուածներով, որոնք միանգամայն տարբերուում են Հ. Ալիշանի «Երակի»-ի արձանագրութիւններից:

Այն անձը, որի ձեռքն անցած է եղել այդ երկը տասն տետրերից բաղկացած, ծանօթ դէպքերի ժամա-